

Երևան, 16 հունվարի 2012 թ.

Հարգելի տնօրեն,

«Այբ» կրթական հիմնադրամը ուրախ է հայտարարելու, որ «**Կենգուրու 2012» միջազգային մաթեմատիկական մրցույթին մասնակցել ցանկացող դպրոցների գրանցումը սկսված է:**

Այս տարի «Կենգուրու» մրցույթը կանցկացվի **մարտի 15-ին:**

Մրցույթին մասնակցելու համար երեխաների վճարման, անդորրագիրը դպրոց ներկայացնելու և դպրոցի ցանկերում գրանցվելու վերջնաժամկետն է **փետրվարի 17-ը**, դպրոցի հայտի ներկայացման վերջնաժամկետն է **փետրվարի 23-ը:**

Կրկին շնորհակալություն ենք հայտնում այն դպրոցներին, որոնք մասնակցել են «Կենգուրու 2011»-ին, և լիահույս ենք, որ այս տարի ևս ձեր դպրոցների սաները նույն խանդավառությամբ կփորձեն ուժերը մաթեմատիկայում: Սիրով հրավիրում ենք մասնակցելու «Կենգուրուին» նաև բոլոր այն դպրոցներին, որոնք չեն մասնակցել մրցույթին անցյալ տարի:

Մանրամասն տեղեկությունները «Կենգուրուին» մասնակցելու ընթացակարգի վերաբերյալ բերված են նամակին կից փաթեթում, որի պարունակությունը նկարագրված է նամակի դարձերեսին: Այս տարի մրցույթի կազմակերպման գործընթացում կատարվել են հետևյալ երկու փոփոխությունները՝

- Մրցույթին կարող են մասնակցել նաև 12-րդ դասարանի բոլոր ցանկացող աշակերտները:
- Եթե դպրոցում մասնակիցների թիվը պակաս է 5-ից, տվյալ դպրոցը մասնակցության հայտ ներկայացնել չի կարող (մրցույթի անցկացման կարգ, կետ 3.3):

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. Յուրաքանչյուր մասնակից դպրոց, ինչպես և նախորդ տարի, ունենալու է իր անփոփոխ ծածկագիրը: **Ձեր դպրոցի ծածկագիրը նշված է ծրարի վրա:**

Մրցույթի կայքէջն է՝ www.kangaroo.am: Բոլոր հարցերով դիմեք Ձեր մարզային համակարգողներին, որոնց հեռախոսահամարները գրված են նամակի դարձերեսին:

Ակնկալում ենք ձեր դպրոցի մասնակցությունը «Մաթեմատիկան բոլորի համար» խորագրի ներքո անցկացվող այս հետաքրքիր մրցույթին:

Հարգանքներով՝



Դավիթ Սահակյան
Գործադիր տնօրեն

«Կենգուրուի» փաթեթը ներառում է.

- 1. «Կենգուրու 2012»-ի անցկացման մանրամասն կարգ**
Խնդրում ենք Ձեզ և ձեր դպրոցում մրցույթի կազմակերպիչներին ուշադրությամբ ծանոթանալ այս կարգին և կարգում կատարված փոփոխություններին:
- 2. «Կենգուրու 2011»-ի հակիրճ նկարագրող ամփոփում**
Միրով ներկայացնում ենք անցյալ տարվա մրցույթի հիմնական արդյունքներն ու ձեռքբերումները:
- 3. Դպրոցի հայտի ձև**
Խնդրում ենք լրացնել մասնակցության հայտը և մինչև փետրվարի 23-ը ներկայացնել այն «Այբ» կամ մարզային համակարգողին, ձեր դպրոցի մասնակից աշակերտների ցանկի և վճարման անդորրագրերի հետ միասին: Մրցույթին կմասնակցեն միայն նշված ժամկետում հայտ ներկայացրած դպրոցները:
- 4. Ուղեցույց դպրոցների համար**
Այստեղ, հեշտության համար, քայլ առ քայլ ներկայացված են դպրոցի պատասխանատուի անելիքները՝ ըստ ժամանակացույցի:
- 5. A3 չափի պաստառ**
Խնդրում ենք փակցնել պաստառը դպրոցում՝ որպես «Կենգուրու 2012»-ի հայտարարություն և մրցույթին գրանցվելու ուղեցույց երեխաների համար:
- 6. Մասնակցության վճարը կատարելու համար անհրաժեշտ բանկային վավերապայմաններ**
Այս թերթիկները, որտեղ բերված է «ՎՏԲ-Հայաստան» բանկում մասնակցության վճարը կատարելու կարգը, նախատեսված են երեխաներին տրամադրելու համար: Խնդրում ենք բազմացնել դրանք անհրաժեշտ բանակով, կտրատել և բաժանել երեխաներին:
- 7. «Կենգուրուի» օրացույց**
2012 թվականի համար նախատեսված օրացույց:

Ի՞նչ է «Կենգուրուն»

«Կենգուրուն» մեծ մասսայականություն վայելող մաթեմատիկական մրցույթ է և կազմված է տրամաբանական ու հետաքրքրաշարժ խնդիրներից: Ամեն տարի մրցույթին մասնակցում են միլիոնավոր երեխաներ աշխարհի մոտ 50 երկրից: Մրցույթն անցկացվում է անմիջականորեն դպրոցներում՝ ներգրավելով 3-12-րդ դասարանցի բոլոր ցանկացող երեխաներին: Բոլոր մասնակից դպրոցներին և աշակերտներին տրվում են մասնակցության հավաստագրեր, բոլոր երեխաներն ստանում են նաև հուշանվերներ, լավագույնները՝ պատվոգրեր ու մրցանակներ: Իսկ հաղթողներին սպասում են արժեքավոր նվերներ, ընդհուպ մինչև եվրոպական երկրներում կազմակերպվող միջազգային ամառային ճամբարի ուղեգիր:

«Կենգուրուն» մրցույթը չի անցկացվում դպրոցների միջև, այլ նպատակ ունի համընդհանուր հետաքրքրություն առաջացնել մաթեմատիկայի հանդեպ՝ այն առավել գրավիչ ու սիրելի դարձնելով երեխաների համար: Մրցույթի ավարտից հետո յուրաքանչյուր դպրոց կստանա իր աշակերտների արդյունքների վերաբերյալ ամփոփ հաշվետվություն:

«Կենգուրուն» մրցույթն անցկացվում է ՀՀ կրթության և գիտության նախարարության հովանու ներքո:

Հայաստանում մրցույթի բացառիկ կազմակերպիչն է «Այբ» կրթական հիմնադրամը:

Մարզային համակարգողներ

- 1. Արագածոտն**
093 59-08-35, Գայանե Դանիելյան
- 2. Արարատ**
093 01-08-61, Մարինե Սարյան
- 3. Արմավիր**
093 01-08-63, Աննա Մխիթարյան
- 4. Գեղարքունիք**
094 44-26-79, Հասմիկ Ներսիսյան
- 5. Երևան, 54-37-07**
093 01-08-63, Աննա Մխիթարյան
- 6. Լոռի**
094 44-26-83, Աննա Բաղդասարյան
- 7. Կոտայք**
094 44-26-91, Աննա Բաղդասարյան
- 8. Շիրակ**
093 46-49-03, Վարդան Մանուկյան
- 9. Սյունիք**
098 68-50-73, Սևադա Խոջաբաղյան
- 10. Վայոց Ձոր**
098 68-50-73, Սևադա Խոջաբաղյան
- 11. Տավուշ**
094 44-26-93, Անահիտ Ավայան